



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՕՐԷՆԸ ԶԱՌՆԹԻԻ ՄԷՋ ՄԱՏՈՒՅԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՒ ՀԱՅ ԳԻՐՔԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՎԱՃԱՌԻ ԱՌԻԹՈՎ

ՀԱՄԱՔՈՎ ԲԱԼԵՆՔ ՈՒ ՀԵՏԵԻՆՔ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ ՈՒՐԻՒՆ, ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՈՒ ԹՈՂԱԾ ԱՒԱՆԴԻՆ

ՊԱՏԳԱՄԵՑ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ

Հոկտեմբեր ամիսը Հայ ժողովուրդին համար մշակոյթի ամիս է, մշակոյթ մը, զոր կերտեց Ոսկեդարու թարգմանչաց վեհ սերունդը, անոր տալով ինքնուրոյն դիմագիծ մը՝ հայկականութեամբ օծուն:

Տարիներու սովորութեան համաձայն, Օրենճ Զառնթիի Հայ գաղութը, հոգեւոր հովիւ, հոգաբարձութիւն եւ Արի-Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարանի տնօրէնութիւն, միատեղ ջանքերով, Հոկտեմբեր ամսուն կը կազմակերպեն Հայ գիրքի ցուցահանդէս վաճառք, հովանաւորութեամբ եւ հանդիսապետութեամբ Թեմիս Առաջնորդ՝ Բարձ. Ս. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի:

Կիրակի, 8 Հոկտեմբեր առաւօտուն, Օրենճ Զառնթիի «Ղուկասեան» սրահէն ներս (Եկեղեցին վերանորոգութեան մէջ ըլլալուն պատճառաւ) հանդիսաւոր Ս. եւ անմահ Պատարագ մատուցանեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ս. Սեղանին կը սպասարկէին Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ եկեղեցւոյս հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Զինյ. Երեցեան:

Քարոզի ընթացքին Սրբազան Հայրը նախ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ կը գտնուի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ ծխական համայնքին հետ եւ միասին կը կատարեն մշակոյթի ամսուան տօնակատարութիւնը եւ Հայ Գիրքի ցուցահանդէս վաճառքը: Սրբազանը անդրադարձաւ Եկեղեցիին վերանորոգութեան մասին եւ ըսաւ, թէ հաւաքական ճիգով՝ հովիւ, հոգաբարձութիւն եւ ժողովուրդ, միատեղ ջանքերով եւ նիւթաբարոյական օժանդակութեամբ պիտի գեղեցկազարդուի այս Սուրբ Եկեղեցին: Քսան տարի անցեր է այս եկեղեցւոյ շինութեան, վերանորոգութիւնը առիթ պէտք է ըլլայ հաւատքի վրայ վերամրապնդուելու եւ Աստուծոյ ներկայութեամբ զօրացած առաքելութիւն տանելու: Այլ խօսքով նիւթական Տաճարը եւ հոգեւոր տաճարը, այսինքն՝ մեր անձերը, պէտք է միատեղ վերանորոգուին, պէտք է հաւատքով ապրինք ու գործենք, քալենք Սահակ-Մեսրոպեան հաւատքի ուղիէն, սերը, եղբայրութիւնն ու գաղութի միութիւնը հրամայական ապրում պէտք է դառնան մեզի համար եւ հետամուտ ըլլանք բարիք գործելու, հեռու մնալով չար ամբաստանութիւններէ եւ սին բամբասանքներէ: Սրբազանը, փոխ առնելով Պօղոս Առաքեալի խօսքը, բոլորին յիշեցուց ըսելով. «Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Բրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ

պարզապես իր անունը կը կրէք... Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք... Ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք» (Ա. Կորնթացիս 13:5-7): «Այս գաղութը պետք է իրարմով զօրանայ, իրարմով հարստանայ», կոչ ուղեց Առաջնորդ Սրբազանը, «դէմ դնելով գաղութին դիմաց յարուցուող բոլոր չարիքներուն: Եւ մենք հետամուտ պետք է ըլլանք վերանորոգելու ո՛չ միայն նիւթական այս եկեղեցին, այլ մանաւանդ՝ մեր անձերը, մեր գաղութը, մեր կազմակերպութիւնները եւ յարակից բոլոր մարմինները: Մենք մեր խօսքը գործի՛ պետք է վերածենք, որպէսզի մեր կեանքը պայծառացնենք: Աստուծոյ ներկայութեամբ պետք է ապրինք, որպէսզի մեր հոգիները գեղեցկազարդուին: Գաղութը շէն պետք է պահենք՝ մեր բոլորին ֆիզիքական ու հոգեւոր ներկայութեամբ: Անկեղծաւոր հաւատքով ապրինք ու գործենք, որպէսզի վայելենք մեր հաւաքական առաքելութեան ու ծառայութեան քաղցրութիւնը», եզրափակեց Սրբազան Յայրը:

Ս. Եւ անմահ Պատարագէն ետք թափօրով ներկաները առաջնորդուեցան «Յայ Կեդրոն»ի սրահը, ուր Առաջնորդ Սրբազան Յայրը, գնահատելէ ետք Յայ Գիրքի ցուցահանդէս այս վաճառքին կազմակերպիչ անձերը, բացուած յայտարարեց ցուցահանդէսը: Հաւաքական նկար առնուելէ ետք, ներկաները մօտեցան գիրքերուն, պատրաստուած ու հրամցուած անուշեղէններուն հետ վայելելով նաեւ Յայ Գիրքին քաղցրութիւնը:

ՍՐԲԱԶԱՆԸ Կ'ԱՅՑԵԼԷ ԱՐԻ ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Չորեքշաբթի, 11 Յոկտեմբերի կեսօրին, Առաջնորդ Սրբազան Յայրը պաշտօնական այցելութիւն մը տուաւ Օրէնճ Քաունթիի Արի Կիրակոս Մինասեան Ազգ. Վարժարան, վերամուտին Ազգային Դպրոցներ այցելելու ծիրէն ներս: Սրբազան Յօր կ'ընկերանային Յայր Պարթեւը, եկեղեցւոյս հոգեւոր հովիւը, Ազգային Վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Կարօ Յակոբեան եւ եկեղեցւոյս հոգաբարձական կազմը:

Վարժարանիս մուտքին Առաջնորդ Սրբազան Յայրը եւ իրեն ընկերակիցները դիմաւորուեցան վարժարանիս տնօրէն՝ Տիար Ասատուր Ասատուրեանին կողմէ, եւ ապա հերթաբար այցելեցին մանկապարտեզի եւ նախակրթարանի բոլոր դասարանները, որոնց Սրբազանը գնահատեց եւ խօսեցաւ թարգմանիչ վարդապետներու կերտած Յայ Գիրի ու մշակոյթի մասին: Իսկ աշակերտները երգերով եւ Մեսրոպ Մաշտոցին ու Յայ Գիրին նուիրուած արտասանութիւններով խանդավառեցին հիւրերը, այսպիսով՝ անգամ մը եւս փաստելով Յայ Դպրոցին տարած վեհ առաքելութիւնը մեր գաղութի կեանքէն ներս:

Ապա Սրբազան Յայրը մտերմիկ հանդիպում մը ունեցաւ վարժարանիս Տնօրէնին եւ Հոգաբարձութեանց հետ, լսեց Դպրոցին վերջին իրագործումներուն մասին, ինչպէս նաեւ՝ անոնց առաջարկները: Պատշաճ հիւրասիրութենէ ետք Սրբազանը օրինեց բոլորը եւ բարի ու անվտանգ տարի մը մաղթեց բոլորին:

AT THE ORANGE COUNTY ARMENIAN BOOK FAIR

**LET US WALK WITH FAITH AND FOLLOW THE PATH, MISSION, AND
TRADITIONS OF OUR HOLY TRANSLATORS**

DECLARED THE PRELATE

On Sunday, October 8, in celebration of Armenian cultural month, the Forty Martyrs Pastor, Board of Trustees, and the administration of A.G. Minassian School had organized a book fair, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, which took place at “Gugasian” Hall. On the morning of the book fair, the Prelate conducted Holy Mass at “Gugasian” Hall (due to renovation at the church). Very Rev. Fr. Barthev Gulumian and Parish Pastor Rev. Hrant Yeretsian assisted at the altar.

In his sermon, the Prelate first gave thanks to God for granting him the opportunity to be with the Orange County parishioners and to jointly celebrate the Armenian cultural month and to preside over the opening of the book fair. The Prelate commended the combined efforts of the pastor, board of trustees, and parishioners in the renovation of the church, stating that alongside the physical renovation of the church, each and every parishioner must also be renewed spiritually. He emphasized that the community members must stand together and pursue not only the physical renovation of the church but also the renewal of themselves, their community, organizations, and other affiliated bodies. Only by working together with faith for the fulfillment of a common mission, can we enjoy the fruits of our service, concluded the Prelate.

Following Mass, the parishioners headed in a procession to the hall of the “Armenian Center”, where the Prelate conducted the opening of the book fair.

The Prelate Visits A. G. Minassian School

On Wednesday, October 11, the Prelate paid an official visit to Ari Guiragos Minassian Armenian School in Orange County, as part of his visitations to Prelacy Schools on the occasion of the beginning of the new academic year. Accompanying the Prelate were Very Rev. Fr. Barthev Gulumian, Rev. Hrant Yeretsian, and Executive Council Chairman Dr. Garo Agopian.

At the school, the Prelate was greeted by Principal Mr. Assadour Assadourian, after which he visited each class where he spoke to the students about the Armenian language and culture founded by our holy translators. The students in turn greeted the guests with songs and poetry dedicated to the Armenian language.

The Prelate then met with the school principal and church board of trustees, where he received updates on the school’s endeavors and their future plans. The visit concluded with the Prelate offering his blessings for a safe year.